ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 01 » հուլիսի 2016 թվականի N 15-Ա

«ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(փոփ. կատարվել է 13.08.2018թ. N 23-Ա կարգադրությամբ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի և Գյումրու համայնքապետարանի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) համաձայնագրի 2.03.-րդ բաժնի դրույթները՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին Գյումրի քաղաքում Ծրագրի շրջանակում նախատեսված փողոցների հիմնանորոգման և արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

   1) աշխատանքային խմբի ղեկավար՝ Արա Մելիքջանյան– ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ,

   անդամներ՝

   2) Լևոն Բարսեղյան – Գյումրի համայնքի ավագաու անդամ,
   3) Խաչատուր Խնձրցյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,
   4) Մկրտիչ Ասատրյան – աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետա-շինարարական բաժնի գլխավոր մասնագետ,
   5) Դանիել Վարդանյան – աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
   6) Աննա Պետրոսյան – աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ,
   7) Կնյազ Մանասյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ,
   8) Սամվել Ենգոյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալի ժ/պ,

9) Արթուր Գրիգորյան – աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ,
10) Համազասպ Մարտիրոսյան – աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Հանձնարարել աշխատանքային խմբին՝ Ծրագրի իրագործման ողջ ընթացքում համակարգել Ծրագրի իրականացման հետ կապված բոլոր հարցերը, այդ թվում՝ Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը կազմակերպելու, կառավարելու, մոնիթորինգի ենթարկելու, գնահատելու և հաշվետվություններ կազմելու գործընթացները:
3. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Արա Մելիքջանյանի վրա:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2016թ. ք.Գյումրի